ԵԴ2/8884/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

03 հուլիսի 2023թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Լ. Սաղոյանս, ծանոթանալով «Գ.Գ.Է.ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

ՊԱՐԶԵՑԻ

22.06.2023 թվականին Հայցվորի ներկայացուցիչ Զոհրակ Ապրեսյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ «Հասմիկ ճամբար» ՍՊ ընկերության՝ «ՀՃԱՍՊԸ-ԳՀԱՊՁԲ-23/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման հունիսի 12-ի նիստի թիվ 2.1 արձանագրությունը և որպես անվավերության հետևանք «ՀՃԱՍՊԸ-ԳՀԱՊՁԲ-23/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման հունիսի 14-ի նիստի թիվ 2.2 արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը դատավորին է հանձնվել 26.06.2023 թվականին:

Դատարանի 28.06.2023 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ թերությունները վերացնելու համար 3-օրյա ժամկետի տրամադրմամբ:

Հայցադիմումը կրկին ներկայացվել է 29.06.2023 թվականին՝ հայցադիմումի վերադարձման համար հիմք հանդիսացած թերությունները շտկված:

Կրկին ներկայացված հայցադիմումը դատավորի աշխատակազմին է հանձնվել է 03.07.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի ապատնանշված որոշմամբ

ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Գ.Գ.Է.ՀՈԼԴԻՆԳ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ «Հասմիկ ճամբար» ՍՊ ընկերության՝ «ՀՃԱՍՊԸ-ԳՀԱՊՁԲ-23/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման հունիսի 12-ի նիստի թիվ 2.1 արձանագրությունը և որպես անվավերության հետևանք «ՀՃԱՍՊԸ-ԳՀԱՊՁԲ-23/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման հունիսի 14-ի նիստի թիվ 2.2 արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ և համարել Դատարանի վարույթ ընդունված սկզբնական ներկայացման օրը՝ 22.06.2023 թվականին:

Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 2023 թվականին օգոստոսի 11-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Լ. ՍԱՂՈՅԱՆ**